

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

621-13
D-46

ԿԱՐՈ ՂԱՐԱԳԵՍՈԶՅԱՆ

ՇՈԳԵՔԱՐՇԻ ՇՈԳԵՄԵՔԵՆԱՆ
ՆՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ
ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ



ՊԵՏՀՐԱՍ

1931

ՅԵՐԵՎԱՆ

621.13

2. 46

ՄԴ

ԿՈՐՈ ՊԱՐՍԻՑՈՂՅԱՆ


30 JUL 2010

ՇՈԳԵՔԱՐՇԻ ՇՈԳԵՄԵՔԵՆԱՆ

ՆՐԱ. ԿԱՌԱԽՎԱԾՔԻ ՈՒ ԱՇԽԱՏՈՆՔԸ

36. Ակարներով

(Հանրամասչելի ձեռնարկ)



1931

12168-57

ՅԵՐԵՎԱՆ

621.13

2-46

ՄՐ

ԿԱՐՈ ՊԱՐԱԳԱՅՑՈՂՑԱՆ


30 JUL 20

ՇՈԳԵՔԱՐՇԻ ՇՈԳԵՄԵՔԵՆԱՆ

ՆՐԱ. ԿԱՐՈՒԽՎԱԾՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

36. Ակարներով

(Հանրամասչելի ձեռնարկ)



ՊԵՏՉՈՒՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՈՅ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԽԵ-ՀՍՊԱ
Ա. ՄԱՏԻԿԱՆՅԱՆ

1931

ՏԵՐԵՎԱՆ

12168-57

19.06.2013

10119

ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱՆՈՒՄ
ՏԵԽՆԻԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄ Ե ԱՄԵՆ ԻՆՉ

Ս Տ Ա Լ Ի Ն

Ֆաբրուրծուսի տասնամյակի առքիվ հեղինակն իր առ-
խատանելը նվիրում է ֆաբրուրծուսի ակտիվ պատշաճ ու
բաղաբական չեթ կենինթԱՆ ԿՈՄՄՈՄՈՒԼԻՆ:

Հրատ. № 1708

Քլավլիտ № 6550 (բ) Պատվիր № 3530 Տիրագ 5000

Գետհրատի ապարան, Յերևան

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս գրքի հիմնական նպատակն եւ հանրամատչելի կերպով
ընթերցողին ծանոթացնել շոգեմեքենազի կառուցվածքի ու աշ-
խատանքի հետ:

Ընդհանրապես տեխնիկական նյութի շուրջ գրելը հայերեն
լեզվով համապատասխան տերմինների բացակայության հետևան-
քով չափազանց դժվար ե, իսկ այդ տեխնիկական նյութը դարձ-
նել հանրամատչելի, պարզ ու յուրաքանչյուր գրագետ մարդու
համար դյուրըմբանելի, ավելի ևս դժվար գործ ե: Այս իսկ պատ-
ճառով անշուշտ, բրոցուրն ունենալու իւ լեզվական թերություն-
ներ, վորոնց մասին յուրաքանչյուր դիտողություն ուրախությամբ
կնդունեմ:

Բրոշյուրի անհրաժեշտությունը յես զգացել եմ լենինակա-
նի լերկաթուղարին ֆարգործուառմ յերկու տարվա ընթացքում
մի քանի խմբերում շոգեքարշի շոգեմեքենայի մասին դասախո-
սելիս, լերը աշակերտները ուսւաց լեզվին թույլ տիրապետելու
պատճառով հնարավորություն չեն ունեցել ոգտվել համեմատա-
բար հարուստ ուսուական գրականությունից:

Նույն զրութիան մեջ են գտնվում նաև այն բանվորները,
վորոնք պարզ գիտակցելով տեխնիկապես զարգանալու անհրա-
ժեշտությունը՝ լեզվի պատճառով յետ են մնում, դժվարանում են
առաջ շարժվել, իսկ վորակյալ բանվորին տեխնիկական տե-
սությունները յետ մնալը նշանակում ե գործնականում նույնպես
առաջ շշարժվել, վորպիսի դրություն խորհրդացին արդյունաբե-
րության զարդացման ներկա շրջանում անհանդուրժելի յե:

Յեթե այս բրոշյուրը կարողանա շոգեմեքենան ուսում-
նասիրող աշակերտներին ու բանվորական լայն խավերին փոք-
րիկ սժանդակություն ցուց տալ շոգեմեքենայի աշխատանքի
մասին հիմնական գաղափար կտղմելու, ապա աշխատանքը կտ-
րելի յե համարել իր նպատակին հասած:

Այս աշխատանքը գրելիս ոգտվել եմ իմ դասախոսությունուների կոնսպեկտներից և ոռւսական հետեւալ աղբյուրներից.

1. Ф. Зейферт—Паровые котлы и поровые машины.
2. Р. Фатер—Паровая машина ч. 1.
3. Голубьев—Руководство ж. д. машиниста.
4. А. К. Бем—Служба паровозного машиниста.
5. Г. П. Васильев—Паровоз.
6. Кузнецов—Катехизис паровозного машиниста.

Յեղած գծագրերը համարված բոլորը գծել ե Յաղվիդա Մարցելինի Ղարազողանը, խմբագրությունը կատարել ե ընկ. Դ. Հարգանյանը, վորի ցուցմունքները զգալի կերպով պակասացրել են ինքական թերությունները, իսկ աշխատանքի տեխնիկական մասը մեծ մասամբ կատարել ե ֆարբործուսի աշակերտ Գարեգին Մովսեսյանը:

Կ. ԴԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Անդինական
Մարտ—1931 թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շոգեմեքենա տակելով մենք հասկանում ենք մի շաբժիչ մեքենա, վորն իր աշխատանքը կատարում է շոգու, գոլորշու ուժով Ուստի շոգեմեքենայի աշխատանքի հետ ծանոթանալիս, պետք ե վորոշ տեղեկություն ունենալ ջրալին գոլորշու հատկությունների մասին ու շոգեկաթսալի մասին վորը գոլորշի լեռ պատրաստում և վրբը իրենից ներկայացնում ե մի սարքավորում (установка) մի շարք հարմարություններով ու մեխանիզմներով:

Մի ժանի կարեվոր նախնական տեղեկություններ

Մքնոլորտային ճեղում. Ամբողջ լերկրագունդը շրջապատված է 60—70 կիլոմետր հաստություն ունեցող ողի շերտով. Ողը ծանրություն ունի և նրա տեսակարար կշիռը հավասար է 0,0013-ի, այսինքն մեկ խորանարդ սանտիմետր ողի կշիռն հավասար է 0,0013 գրամմի—(ջրից մոտավորապես 770 անգամ թեթև):

Մեկ խորանարդ սանտիմետր ջուրը կը ունի (գր. $\frac{13}{1000}$ 770):

Ողի շերտը ճնշում է իր ծանրությամբ լերկրագնդի վրա բուր կողմերից հավասարապես:

Ողի ճնշումն իմանալու համար, մեզանից լուրաքանչյուրն իր տանը կարող է կատարել հետեւալ փորձը:

Ցեմել ջրով լիքը բաժակի յերեսը ծածկի թղթով և թուղթը ձախ ձեռքով պահելով, աշով բաժակի բերանը ցած դարձնի, կտեսնի, վոր ջուրը չի թափկում: Դրա պատճառն այն է, վոր բաժակի բերանին ծածկած թղթի վրա (տակից) ողը ճնշում է ու չի թողնում, վոր թուղթն ընկնի ու ջուրը թափվի:

Երկրագունդը օրշապատող ոգը (մքնոլորտը) յերկրի մակերեսի յուրացանցուր բառակուսի սանտիմետրի վրա նեռում է

մոտ մեկ կիլոգրամմ ուժով, վօրք յեվ կոչվում ե մեկ մթնութեր (առևութեր) ննութեմ:

Տեխնիկայում վորպես գաղերի ճնշման չափ ընդունված ե մթնոլորտային ճնշումը, և յեթե ասվում ե, թէ վորես գաղի ճընշումը՝ հավասար ե մեկ (մթնոլորտ) ատմոսֆեր ճնշման, դա նըշանակում ե, վոր տվյալ գաղն իր շրջապատի (կաթսայի, գլանի) պատերի յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրի վրա ճնշում ե մեկ կիլոգրամմ ուժով, իսկ յեթե ասում են, թէ վորես գաղնի մեջ գոլորշու ճնշումը 10 մթնոլորտ ե, դա նշանակում ե, վոր տվյալ գլանում յեղած գոլորշին այդ գլանի պատերի յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրի վրա ճնշում ե 10 կիլոգրամմ ուժով:

Գաղերի սեղմելիությունը:— Բոլոր գաղերը, նույնպես և ողը, իրենց վրա գործ զրված ճնշումից սեղմում են, իսկ հնարավոր գեպքերում (յեթե տարածությունը թուլ տար) ընդգարձակվում են:

Համաձայն Բուլլ-Մարիոտտի որենքի գաղերի տվյալ մասայի ծավալը հակադարձ համեմատական ե արտաքին ննութեմը (յեթե բարեխառնությունը չի փոխվում):

Այսինքն քանի անգամ վորես ճնշում ունեցող գաղի ծավալը մեծացնենք (առանց ջերմության աստիճանը բարձրացնելու), այնքան անգամ նրա ճնշումը կփոքրանա:

Իսկ հեղուկները համարյա թէ բոլորովին չեն սեղմում, սրա պատճառն այն ե, վոր գաղերի սասնիկներն իրարից շատ ավելի հեռու յեն գտնվում քան թէ հեղուկների մասնիկները և գաղերը սեղմելիս՝ նրանց մասնիկներն իրար են մոտենում ու փոքր տարածություն վրավում:

ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Մեղ շրջապատող մարմիններից վոմանք տաք են, վոմանք սառը: Նրանց ջերմության աստիճանը չափելու համար կան հաստուկ գործիքներ, — ջերմաչափեր:

Ջերմությունից մարմիններն ընդարձակվում են, իսկ սառելուց սեղմում: Մարմինների ջերմությունից ընդարձակվելու հատկությունը չափազանց մեծ տեղ ե զրավում տեխնիկայում այս կամ այն շարժիչ մեքենաները կառուցելիս:

Որինակ յեթե շոգեքարշում ի նկատի չափանեն ընոցի ընդար-

ձակվելու հատկությունը ջերմությունից և հնոցը պինդ կերպով ամրացնեն շոգեքարշի շրջանակին ու զրկեն նրան շարժվելու հրանարավությունից, ապա հնոցը կնդարձակվի, և կխախտվեն այն կապերը, վորոնք միացնում են նրան շրջանակի հետ:

Ջերմությունը մի մարմնից կաբող ե անցնել մյուս մարմը նին:

Որինակ, ինքնայենի խողովակը տաքանում ե և իր մեջ յեղած կը ակից, այդ ջերմության մի մասը հաղորդվում ե շըրջապատվող ջրին ու ջուրը յեռում ե:

Ջերմության քանակը կը ալորի ա: — Կալորի ա: — Նույն քանակի տարրեր նյութեր նույն աստիճանի տաքացնելու համար պահանջվում ե տարրեր քանակությամբ ջերմություն:

Ջերմության քանակը չափելու համար վորպես միավոր տեխնիկայում ընդունված ե կալորիան:

Մեկ (փոքր) կալորիան ջերմուրյան այն բանակն ե, վորը պահանջվում ե մեկ գրամ ջուրը մեկ աստիճան տաքացնելու համար:

Իսկ ջերմության այն քանակը (կալորիան), վորը պահանջվում ե այս կամ այն նյութի մեկ գրամմը մեկ աստիճան տաքացնելու համար՝ կոչվում ե այդ նյութի ենսակարար ջերմությունը:

Որինակ, մեկ գրամմ յերկաթը մեկ աստիճան տաքացնելու համար հարկավոր ե 11/100 կալորիա, իսկ մեկ գրամմ պահանջվում ե 9/100 կալորիա, իսկ մեկ գրամմ ջուրը 1⁰ տաքացնելու համար անհրաժեշտ ե մեկ կալորիա: Այստեղից ել ասում են թէ յերկաթի տեսակարար ջերմությունը հավասար ե 0,11-ի: — պղինձը 0,09, իսկ ջրինը 1-ի:

Հաշվումների ժամանակ սովորաբար ոգտագործվում են՝ վորպես ջերմության քանակի միավոր՝ մեծ կալորիան, իսկ ջերմության մեկ մեծ կալորիան հավասար ե 1000 փոքր կալորիայի, վորը պահանջվում ե 1 կգր. (1000 գրամմ) ջուրը մեկ աստիճան տաքացնելու համար:

Ջերմություն հաղորդունակությունը՝ նյութների միջից ջերմություն փոխադրելու կամ ջերմությունը իրենց մեջ տարածելու ընդունակությունը կոչվում ե նյութերի ջերմալին հաղորդունակություն:

Տարրեր նյութեր, ջերմությունը հաղորդելու միատեսակ ընդունակություն չունեն: Որինակ պղինձը մոտ վեց անգամ արագ և փոխանցում ջերմությունը ջրին: Քան յերկաթը, այդ պատճա-

ոռվ յեթե հնոցի պատերը պղնձից լինեն և նույնիսկ յերկաթից 2—4 անգամ ավելի հաստ թերթերից պատրաստած, պղինձը դարձաւ ավելի արագ կփոխադրի ջերմությունը ջրին, քան յերկաթը:

Ուժ յեվ աշխատանք

Մեխանիկայում ուժ ասելով հասկանում ենք—այն պատճեռը, վորի շնորհիվ հանգիստ զրության մեջ յեղած մարմինը շարժվում է, իսկ շարժվող մարմինը կանգ առնում:

Որինակ՝ կանգնած կառքը տեղից շարժվում է այն պատճեռվ, վոր ձին ուժով քաշում ենքան, այսինքն ձիու ուժը ստիպում է կանգնած կառքին շարժվել: Իսկ յերբ տռանց շոգեքարշի դեպի զառիվայրը շարժվող վագոնը վերջի-վերջու մի համապատասխան տեղ կանգ է առնում, ասում են վոր վագոնն ինքն իրեն կանգնեց:

Սա սխալ է, շարժվող վագոնը կանգնեցնելու համար անպայման գործադրվեց վորեւ ուժ: Վերն է այդ ուժը, վոր մենք չենք տեսնում, դա ոդի դիմադրության ուժն է, վզակների, անիվների ու գծի մեջ յեղած շիման ուժը:

Յեթե մի մոմենտ պատկերացնելինք, վոր այդ ուժերից վոչ մեկը չկա, այս գեղաքում մեկ անդամ շարժվող վագոնը յերբեք չպետք է կանգ առներ:

Տեխնիկայում ոդտակար ու վնասակար ուժերը չափելու համար վորակեան միավոր ընդունված է (մեկ խորանարդ դեցիմետր ՋԲ կիլոր) մեկ կիլոգրամմը:

Ուստի և յերբ առնում ենք, վոր շոգեգլանում մխոցը (որպես) վորից դեպի ներքեւ իջնում է 2000 կիլոգրամ ուժով, դա նշանակում է, վոր յեթե գոլորշին չոգտագործելինք, այլ մխոցի կոթից կախելինք 2000 կգը. ծանրություն ունեցող իր, մը խոցը նույն ուժով կիջներ յած:

Աշխատանք բառի տակ մեխանիկայում հասկանում ենք վորեւ ուժի և նրա անցած ճանապարհի արտադրյալը, իսկ ուժի և ճանապարհի համար վորպես միավոր ընդունված են կիլոգրը բամմը և մետրը:

Որինակ՝ յեթե մեկը գետնից բարձրացնում է 20 կիլոգրամմ ծանրություն ունեցող մի մարմին մի մետր, նշանակում է նա կատարում է 29 կգր.+1 մ=20 կգր. մետր աշխատանքի և յեթե

նա 10 կիլոգրամմ իրը բարձրացնում է 2 մետր բարձրությամբ դա նույնպես նշանակում է, վոր նա 10 կգր.+2 մ=20 կիլոգրամմ մոմենտը աշխատանք է կատարում, իսկ յեթե 20 կիլոգրամմը բարձրացնի 2 մետր բարձրության, նա կատարի 20 կգր.+2 մ=40 կգր. մետր աշխատանք և այլն:

Ուրեմն աշխատանքը չափում է կիլոգրամմումեւերով.

ԶԲՄՑԻՆ ԳՈԼՈՐԾՈՒ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Յեթե ջրով լի, բերանը բաց կաթսան սկսենք տաքացնել, ջուրը կսկսի գոլորշիանալ, ալսինքն հեղուկ զրությունից գազացնը դրության փոխվել:

Ամենաուժեղ գոլորշացում կկատարվի ջրի յեռման ժամանակ, յերբ նա տաքացած կլինի 100° (ցելսիուսի ջերմաչափով, վորը տեխնիկայում ընդունված է վորպես բարեխառնության կամ ջերմաստիճան վորոշելու գործիք):

Յեթե վերևում հիշված կաթսայի բերանը ամուր փակենք, կարճ ժամանակամիջոցում կաթսայի դատարկ տարածությունը կլցվի, և յերբ՝ կաթսայում յեղած տարածությունը գոլորշիով հազենա ու դոլորշու նոր մասնիկների համար տեղ չկհնի, (իսկ կաթսայի տակից ջերմությունը չափեացնենք) այդ ջրի գոլորշացումը կդադարի, թեև կաթսայի միջի ջուրը տաքացած է 100°-ի, Սիա այդ գոլորշին, վոր կաթսայի մեջ լցվեց ու ամբողջ տարծությունն իր մասնիկներով հազեցրել է, կոչվում է տարծությունթը հազեցնող կամ հազեցած գոլորշի:

Ջրի յեռալը կախված է վոչ միայն նրա ջերմաստիճանից այլ և նրա վրա գործադրվող ճնշումից:

Որինակ՝ վելցնենք մի գլանած անոթ, մեկ քառակուսի սանտիմետր մակարդակով մեջը ջուր լցնենք, ջրի վրա դնենք մխոցի անոթին սատիճանաբար սկսենք տաքացնել:

Ընդունենք, վոր մխոցի ծանրությունը չափազանց փոքր է, կամ այդ մխոցը համարյա ծանրություն չունի:

Այս գեղաքում մխոցի վրա ճնշում է շրջապատող ողը, վորն ինչպես գիտենք, լուրաքանչյուր մեկ քառակուսի սանտիմետրի ճնշում է մեկ կիլոգրամ (մեկ մթնոլորտ) ուժով:

Ուրեմն մխոցի վրա կա մեկ մթնոլորտ ճնշում: Ջրի տաքության աստիճանը բարձրանալով, նա պետք է սկսի գոլորշիանալ. բայց քանի վոր նրա վրա մեկ (ատմոսֆեր) ճնշում կա, իսկ գո-

լորշին մինչև 100⁰ տաքանալը շատ ավելի պակաս ձնշում ունի, միոցը տեղից չի շարժվի, և գոլորշին վեր բարձրանալ չի կարողանա, այսինքն (մինչև 100⁰ տաքանալը) գոլորշիացում չի կատարվի, թեև բնության մեջ մենք տեսնում ենք, վոր ամառվա 15⁰—20⁰ տաքության ժամանակ ջրի յերևակից գոլորշի լեռ բարձրանում:

Յերբ ջրի բարեխառնությունը 100⁰ հասցնենք, ջուրը կոկոր յեռալ և ուժեղ կերպով գոլորշիանալով մխոցին, վորի վրա մեկ ատմոսֆեր ձնշում կա (մխոցի ծանրությունը համարում ենք չեղալ), վեր կբարձրացնի, մինչև վոր ամբողջ ջուրը գոլորշիանա:

Յթե գոլորշին վեր բարձրացրեց մխոցը, վորի վրա մեկ մթ. ձնշում կար, նշանակում ե, վոր գոլորշու ձնշումը մեկ մթնոլորշից պակաս չեր, իսկ յեթե մխոցը բոլորովին դուրս չպըստեց այլ միայն վեր բարձրացնելով հավասարակշռեց ու վերեսում պահեց, նշանակում և արտաքին (ողի) և ներքին (գոլորշու) ձնշումները հավասար են, այսինքն 100⁰ ջերմություն ունեցող գոլորշու ձընշումը ևս հավասար և մեկ մթնոլորշի (ատմոսֆերի):

Երականում հենց այդպես ե, հազեցած գոլորշին 100⁰ չերմության գետքում ունի մեկ մթնոլորշ:

Կատարենք մեկ ուրիշ փորձ:

Նույն գլանաձև անոթի մխոցի վրա դնենք մեկ կիլոգրամանոց կշռաքար, ու անոթը կրկին տաքանենք, ջրի ջերմությունը հասցնենք 100⁰-ի:

Ի՞նչ կլինի:

Վորինչ ջուրն այս անդամ 100⁰ տաքանալուց չի յեռա: Ի՞նչու:

Վորովինչետե 100⁰-ում արտադրվող գոլորշին, ինչպես վերեւ պարզեցինք, միայն մեկ մթնոլորշ ձնշման ուժ ունի, այսինքն տակից մխոցին հրում և մեկ կիլոգրամմի ուժով, իսկ վերշից մխոցին ցած են սիմում մեկ մթնոլորշ (1 կգ) շրջապատի ողը, պլաստ 1 կգը. կշռաքարը, այսինքն ընդամենը 2 մթն. պարդե, մեկ մթնոլորշը յերկուսին հաղթահարել չի կարող, ուստի և գոլորշիացում չի լինի: Գործնական բաղմաթիվ փորձեր ցուց են տվել, վոր այս դեպքում գոլորշիացման համար անհրաժեշտ է դլանի մեջ յեղած ջուրը տաքանենք 121⁰, վորովինչետե 121⁰ ջերմություն ունեցող գոլորշին ունի 2 մթ. ձնշում, և կարող է իր ուժով հաշուսարակշռել դրսից յեղած 2 մթ. ձնշան:

Իսկ յեթե նույն գլանի մխոցի վրա 1 կգ.-ի տեղը դնենք

2 գրամ, այսինքն ընդամենը յերեք կիլոդրամ (1 մթ. ողի ձնշում +2 կգ. կշռաքար = 3 կգ.) ապա ջուրը կյեռա և գոլորշի կարտադրի այն դեպքում յերբ նրա տաքությունը հասնի մոտ 134⁰ վորովինչետե 134⁰ հազեցած գոլորշին ունենում և 3 մթնոլորդ ձընշում:

Իսկ վորպեսզի գոլորշին հավասարակշռի 4 կգը-ի, պետք է ջրի տաքությունն հասցնել 144⁰-ի և վերջապես 200 կգրամին հակաճնշելու համար, ջրի տաքության աստիճանը անհրաժեշտ է հասցնել 365⁰-ի:

Այսպիսով վերոհիշված փորձերից մեզ համար պարզվեց հաշեցած շոգու մեկ հիմնական հատկություն, այն և, հազեցած գոլորշու ջերմության աստիճանը համապատասխանում է վորու մթնոլորտային նեօման յեվ հակառակը, յուրաքանչյուր մթնոլորտային նեօման համապատասխանում է վորու ջերմության աստիճան:

Վերջնենք մեր գլանաձև անոթը, վորի միջի ջուրն ամբողջովին տարածությունն հավեցնող գոլորշի լեռ դառել, ու մխոցը վեր և բարձրացել. սկսենք մխոցը ցած սեղմել: Ի՞նչ կլինի: Գոլորշու մի մասը կիսունա, ջուր կդառնա, իսկ մյուս մասը դարձեալ մեկ ատմոսֆեր ձնշում կունենա: Սա հազեցած գոլորշու յերկրորդ հատկությունն են:

Այսինքն՝ հազեցած գոլորշին սեղմվելիս անմիջապես խտանում, ջուր և դտունում, իսկ մնշումը չի բարձրանում: Նույնը լինում է հազեցած գոլորշու ջերմության աստիճանը թհկուղ մի քիչ պակասեցնելուց:

Այս դրությունը ստոցվում է նրանից, վոր հազեցած գոլորշու մասնիկներն այնքան իրար մոտ են, վոր յերբ մի քիչ ել իրար մոտենում են, արդեն միանում ու ջրի կաթիկներ են դառնուում:

ԽՈՆԾԱՎ ՅԵՎ ԶՈՐ ՇՈԴԻ

Վերոհիշյալից մեզ համար պարզ պետք է լինի, վոր հազեցած գոլորշին անմիջապես ջրի հետ կապված և այսինքն հազեցած գոլորշին գտնվում է տաք ջրի յերեսին:

Վորքան գոլորշու մասնիկները ջրի մասնիկներին մոտ են գտնվում, այնքան նրանք խոնավ են, այսինքն ավելի ջրով հարուստ են, կամ ավելի ճիշտ գոլորշու մասնիկների հետ ջրի փոքր թիկ կաթիկները ևս վեր են բարձրանում:

Ահա այդպիսի գոլորշին կոչվում ե հազեցած խոնավ շոգի (տես նկ. № 1):

Շոգեմեքենաները խոնավ գոլորշիով աշխատեցնել բոլորովին ձեռնուու չե, ա) վորովինետև ջրի կաթիլները առաձգական չեն ուստի մեքենայի աշխատանքին ոգուտ տալ չեն կարող և իդուր տեղ են գրավում:

բ) Դլաններում համեմատաբար շատ հազաքվող ջուրը չափազանց մնաս ե և յերբ մխոցն իր ծայրահեղություններին ե հասնում՝ այնտեղ հավաքված ջուրը, չսեղմվելու հետևանքով, գլանի խուփը կարող ե ջարդել: Դրա համար շոգեկաթսաների վրա շենում են մի փոքր բաժանմունք, վորը կաթսալից անջատում են ծակոտիներով պատած էրկաթյա թերթով: Խոնավ գոլորշու մասնիկները վեր բարձրանալով դիպչում են յերկաթյա ցանցին, կաթսայի մեջ, իսկ գոլորշին ազատվելով ջրից՝ բարձրանում ե հատուկ բաժանմունքը, վորը կոչվում ե շոգեգմբեթ, (սyxուպարհիք), իսկ ջրի կաթիլներից ազատված գոլորշին կոչվում ե, հագեցած չոր գոլորշի:

Հագեցած շոգին հիշված հիմնական հատկություններով գործականում զգալի պակասություններ ունի:

Առաջին—Վորոշ, ավելի մեծ ճնշում ստանալու և ավելի աշխատանք կատարելու համար պետք ե ավելի վառելանյութ այրել, (այսինքն ավելի ծախս անել) վորովինետև հագեցած գոլորշու ճնշումը բարձրացնելու համար անպայման պետք ե նրա ջերմության աստիճանը բարձրացնել:

Յերկրորդ.—Հագեցած շոգին կաթսայից գլանը մասնելիս՝ նախքան աշխատանք կտարեկը՝ մասսամբ խտանում, ջուր ե դառնում, այդպիսով անտեղի կորցնում ե իր ուժի մի մասը: Բացի այդ, ինչպես վերևում հիշված ե, ջրի գոյացումը գլանում միանգտայն վտանգավոր ե, և յեթե մեքենավարը հազաքված ջուրը ժամանակին դուրս չթողնի, ջրի հարզածից կարող ե գլանը ջարդվել, վորովինետև ջուրը սեղմվելու հատկություն չունի:

ԳԵՐԱՏԵՍԱՔ ՇՈԳԻ

Յերեք հագեցած գոլորշին ջրից անջատենք ու մի ուրիշ անոթի մեջ նրա տաքության աստիճանը բարցրացնենք, այդ գոլորշին իր հատկություններով հիմնովին կտարբերվի հագեցած գոլորշուց ու կկոչվի գերատաք շոգի:

Անշուշտ ջրից անջատված հազեցած գոլորշու ջերմությունն ավելացնելուց, նա պիտի ընդարձակվի, իսկ յեթե թույլ չտաք, վոր նրա ծավալը մեծանա, ապա նրա ճնշումը կերարձրանա այնպիս, ինչպես մյուս բոլոր գաղերինը, այսինքն համաձայն Գերլցուսակի որենքի վորեւ գաղ 1⁰ տաքացնելիս, նրա ճնշումը բարձրանում ե (կամ ծավալն ե ընդարձակվում) իր սկզբնական ճնշումի (կամ ծավալի) $\frac{1}{273}$ -ով:

Ալսպիսով հազեցած գոլորշին գերատաքացնելիս, մենք կարող ենք հաշվել, թե այս կամ այն աստիճանի գերատաքացնելուց հետո վորքան ավելի ճնշում կստանանք, յեթե ծավալը թողնենք նույնը, կամ, վորքան կնդարձակվի կաթսայի մեջ լողած գոլորշու ծավալը, յեթե ճնշումը նույնը թողնենք:

Որինակ՝ 10 մթնոլորդ ճնշում ունեցող գոլորշին, վոր ըստ աղյուսակի ունի մոտ 180⁰ ջերմություն, գերատաքացնենք, հասցնենք նրա ջերմությունը 300⁰-ի:

1. Վորքանով կմեծանա ստացված գոլորշու ճնշումը, 300⁰—180⁰—120⁰-ով գերատաքացնելուց, յեթե ծավալը նույնը թողնենք,

$$+ \frac{120}{273} = 10 = 4,7 \text{ մթնոլորտով:}$$

2. Վորքան կլինի ստացված գոլորշու ճնշումը:
10 մթ. + 4,7 մթ. = 14,7 մթ.

Գերատաք շոգին կոնդենսացիայի չի լինթարկվում. այս հատկությունը չափազանց խոշոր նշանակություն ունի շոգեմեքենաների աշխատանքի համար:

Որինակ, յեթե հագեցած գոլորշին, վորի ջերմության աստիճանը 86⁰-ի լի հագասար 20—30⁰-ով սառեցնենք, այս գոլորշու մի մասն անպայման կխտանա, ջուր կդառնա: Իսկ յեթե 120⁰ ջերմություն ունեցող հագեցած գոլորշին գերատաքացնենք 66⁰-ով ու դարձնենք նույնպիս 186⁰ ջերմություն ունեցող գերատաք շոգի ու սրան սառեցնելով խլինք 20—30⁰ ջերմություն, այս շոգին չի խտանա:

Գերատաք շոգին չի խտանում, մինչեւ վոր երա ջերմությունը պակասեցնելով չհասնի երա նախնական (գերատաքացնելուց առաջ ունեցած) ջերմության ասթիճանին, այսինքն մինչեւ նորից հագեցած շոգի դառնա:

Սա նշանակում ե, վոր յեթե 120⁰ ջերմություն ունեցող հա-

գեցած շոգին գերատաքացնելով հասցնենք 186⁰-ի վերջինս կոն-
դենսացիայի (խտացման) չի յենթարկվէ մինչև վոր այս կամ
այն միջոցով նրա ջերմաստիճանը կրկին չպակասի ու հասնի (գե-
րատաքացնելուց առաջ ունեցած) 120⁰-ի, վորից հետո յուրաքան-
չուր աստիճան ջերմությունը պակասեցնելուն գոլորշու վորոշ
մասը կլստանա, ջուր կդառնա:

Ուրեմն, հագեցած շոգին վորքան ել բարձր ջերմություն ու-
նենա, յուրաքանչյուր աստիճան սառելիս նրա մի վորոշ մասն
անպայման խտանում ջուր և դառնում, իսկ մինչույն աստիճան
ջերմություն ունեցող գերատաք շոգին չի խտանում մինչև վոր
նրա ջերմությունն այնքան պակասի, վոր հասնի նրա սկզբնա-
կան (հագեցած շողու) ջերմաստիճանին:

Վերևում բերված որինակում 186⁰ ջերմություն ունեցող գե-
րատաք շոգին կխտանար միայն այն դեպքում, յերբ սառեցնելով
նրա ջերմաստիճանը հասնել 120⁰ աստիճանի, վորովհետև տվյալ
շոգին գերատաքացված և 120⁰ հագեցած շոգուց:

Գերատաք շոգու վերօնիշյալ հատկությունը շոգիմեջենանե-
րի համար խոշոր նշանակություն ունի:

Որինակ հագեցած շոգին աշխատանքի սկզբում մտնելով
գլան, դիպչելով գլանի սառը պատերին սրա մի մասը խոտանում
ջուր և դառնում ու կորցնում և ենթըգիալի վորոշ մասը:

Գերատաք շոգու գրական հատկություններից մեկն ել այն
և, վոր ձիւնում կշիռ և մնշում ունեցող շոգու ծավալն ավելի
մեծ և քան նույն մնշում ու կշիռ ունեցող հագեցած շոգու ծա-
վալն, ուստի և գերատաք շոգին նույն մնշումով շոգեգլանը մի
քանի անգամ ավելի կլցնի, այսինքն ավելի աշխատանք կիստա-
րի, համեմատաբար ավելի քիչ ջուր, գոլորշի հետեաբար և վա-
ռելանյութ ծախսելով:

Գերատաք շոգու բացասական կողմը կարելի յե համարել
այն, վոր վերջինս ավելի նոսր, մասնիկներն ավելի մանր են ու
հեշտությամբ կարող են մեքենալում լեղած անցքերից ու շփման
(շարժման) տեղերից անցնել հակառակ կողմը:

Այս պատճառով գերատաք շոգին ոգտագործելու դեպքում
մեքենայի մասերն ավելի լավ, նուրբ պետք և հարմարեցվեն, վո-
րը պահանջում և մշակող բանվորից ավելի ժամանակ ու բարձր
վորակ:

ԴԱԼՈՐԵՒԱՅՄԱՆ ԳԱՂՏՆԻ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Գոլորշիացման գաղտնի ջերմություն կոչվում և ջերմու-
թյան այն քանակը (կալորիաները), վորը ծախսվում և ջրի գո-
լորշիացման վրա, բայց ջերմությունը չափելիս ջերմաչափը ցույց
չի տալիս:

Պարզենք որինակներով:

Գոլորշ. թագնված ջերմություն կոչվում և ջերմության այն
քանակը, վորը պահանջվում և 1 կ.գ. 100⁰ ի ջուրը 100⁰ տա-
քություն ունեցող գոլորշի դարձնելու համար:

Ֆիզիկայից մենք գիտենք, վոր մեկ կիլոգրամ ջուրը մեկ
աստիճան տաքացնելու համար, անհրաժեշտ և ծախսել ջերմու-
թյան մեկ մեծ կալորիա: Աւստի մեկ կիլոգրամ ջուրը 100⁰ տա-
քացնելու համար, մենք պետք և ծախսենք 100 մեծ կալորիա,
և ջերմաչափը ցույց կտա ջրի ջերմությունը չափելիս, 100⁰ ի,
վորից մենք ինքնըստինքան կեզրակացնենք վոր, այդ ջուրը
100⁰ տաքացնելու համար ծախսվել և 100 մեծ կալորիա: Ինչպես
տեսնում ենք այստեղ թագնված ջերմություն չկա:

Այժմ ինթե այս 100⁰ ջերմություն ունեցող ջուրը շարու-
նակենք տաքացնել այսինքն ջերմության կալորիաներ ծախսել:

Ջուրը արագ կերպով կակսի գոլորշիանալ և 537 կալորիա
ջերմություն ինքս ծախսելուց հետո, 1 կ.գ. ջուրը ամբողջովին
գոլորշի կղապնա:

Ուրեմն 1 կիլոգրամ ջուրը գոլորշի դարձնելու համար ծախս-
ված 100 մեծ կալորիա, ջուրը յեռացնելու համար և 537 կա-
լորիա յեռացող ջուրը գոլորշի դարձնելու համար, այսինքն ըն-
դամենը $100 + 537 = 637$ մեծ կալորիա: Յեթե այս գոլորշու ջեր-
մությունը ջերմաչափով չափենք՝ ջերմաչափը ցույց կտա 100⁰,
այսինքն այնքան, վորքան ցույց եր տալիս 100 կալորիա ծախ-
սելուց ջուրը տաքացնելուց հետո, իսկ ծախսված 537 կալորիայի
մասին (վոր դնացել և ջուրն անբողջովին գոլորշի դարձնելու
վրա) ջերմաչափը վոչինչ չի տարի:

Ահա այդ 537 կալորիան, վոր ծախսվել և, գոլորշիացման
վրա, բայց ջերմաչափը ցույց չի տալիս, կոչվում և ջրի գոլոր-
շիացման թագնված ջերմություն (զաղանի ջերմություն):

Յեթե գոլորշին սառեցնենք՝ այս թագնված ջերմությունը
կարող և ինայտ գալ և համապատասխան աշխատանք կատարել,
բայց այս հարցի մասին մենք կանգ չենք առնի, վորովհետև
շոգեմեջենայի մեջ առանձին առաջարկություն չենք գործում:




ՇՈԳԵԿԱՐԱՎՈՐՈՒՄ

Այն ամեն կազմից ծածկված անոթը, վորի մեջ պատրաստվում և մեկ մթնոլորտից ավելի ճնշում ունեցող դոլորշի, կոչվում և չոգեկաթսաւ:

Շոգեկաթսաւի ձեր ըստ հնարավորության պետք և այնպես լինի, վոր դիմանա այնտեղ զարգացող 10—15 անտ. և ավելի ճնշում ունեցող շոգու ուժին ու չպայթի, այս իսկ պատճառով շոգեկաթսաները գլանաձև կամ կլոր գնդի ձևից են շինում, վորովհետև մեխանիկայի որենքով այս ձերի կաթսաները ավելի դիմացուն են ու ձեսփոխման (դիմորմացիալի) պակաս յենթակա:

Թեև վերջինը, գնդի ձև ունեցողը, ավելի դիմացիունություն և տալիս, բայց կոնստրուկտիվ տեսակետից աննպատակահարմար և քիչ տարածված, այն ել վարպես հատուկ նշանակություն ունեցող շոգեկաթսաւ:



Նկ. 1. Ամենապարզ շոգեկաթսայի կառուցվածքը:

Շոգեկաթսայից պահանջվում է նաև, վոր ստացած ջերմությունն արագ կերպով փոխանցի ջրին, արագ դոլորշիացում կատարելու նպատակով:

Ամենապարզ շոգեկաթսաները հետեւյալ կառուցվածքը ունեն (տես Նկ. 1 նկ.):

ա) շոգեկաթսա

բ) հնոց

գ) ոդանցք (սնվածք)

դ) ծխանցք

յե) հնոցի դռնակ

զ) ծխատուփ (ծուխը հավաքելու տեղ)

ե) ծխնելուցց

ի) շոգեգմբեթ (ձոր, գոլորշու նկուղ)

լ) շոգեբեր խողովակ

թ) ջուր մատակարարող խողովակ

լ) և մի շարք ուղիղ հարմարություններ, արմատուրա, վորոնք ապահովում են կաթսայի նորմալ աշխատանքն ու պահպանում են նրան պայմանականությունը:

Շոգեկաթսա, ի աշխատանքը.—Հնոցում, կրակակալի վրա այլում են վառելանությը, վորի այլումն ապահովելու, անհրաժեշտ քանակությամբ ողը ստացվում և ողի սնվածքից:

Դրսի ողն ունի 1 մթնոլորտ ճնշում, իսկ ծխատար խողովակներում և ծխնելուցներում ողի ճնշումը 1 մթնոլորտից պաշտօն և, այս պատճառով անընդհատ դրսից ստոր ողը իր ճնշումով մտնում և հնոց, այլումը զարգացնում ու վորպես այրված տաք դադ վառելանյութի ելեմենտների հետ միացած դուրս և գնում:

Տաք գազերը անցնելով ծխատար խողովակով դեպի կաթսայի տակի մասն՝ անընդհատ վողողում են կաթսայի պատերն ու իրենց ջերմության մի մասը հաղորդում կաթսայի թերթերին, ապա հավաքելով ծխատուփում այնտեղից ել ծխնելույզով դուրս են գնում մթնոլորտ:

Վորքան ծխնելույզը լիրկար լինի, այնքան զբսից թարմողի մատակարարումը ուժեղ կլինի, այնքան տաք գազերը արագ դուրս կգնան, այնքան այլումը լավ կլինի այստեղից ել այնքան ջրի գոլորշիացում արագ կկատարվի:

Կաթսայի թերթերը շինված են ջերմությունը լավ հաղորդող (փոխանցող) նյութից-ուստի անմիջակես տաք գազերից ստացած ջերմության մեծ մասը հաղորդում են ջրին.

Ցերը ջուրը տաքանում և 100°-ի, յեռում և ուժեղ կերպով շոգի և արտադրում:

Իսկ յերբ շոգին հավաքվում և ջրի լիրեսին ու մեկ կիլոզրամ ուժով ճնշում և ջրի լուրաքանչյուր մեկ քառակուսի սանտիմետր մակերեսի վրա, ջուրը դադարում և յեռալուց:

Հետզհետեւ ջուրն ավելի տաքանալով դանդաղ կերպով գոլորշի և արտադրում վորի ճնշումը համապատասխանորեն բարձրանում և 120° ջերմության հասնելիս ջրի յերեսին դտնվող շոգին ունենում և 2 տամասիք ճնշում: Ցերեւ այժմ ջերմության աստիճանը

Հբարձրանար ու մնար 120⁰-ում, մեր կաթսայում ալիս շողիացում չեր կատարվի թեկուղ ջուրը 120⁰ ջերմություն ունի, վորովհետև 2 ատմոսփեր ճնշումով շոգին ազդում ե ջրի յերեսին ու չի թողնում, վոր ջրի նոր մասնիկներ վեր բարձրանան շոգի գառնան:

Այժմ, վորպիսզի ջուրը նորից շոգի արտադրի պետք ե կամ ջերմությունն ավելացնել, կամ յեղած գոլորշու մի մասը ծախսել, վոր վրայի ճնշումը պակասի:

Այսպիսով հագեցած շոգու որենքով կաթսայում ջրի ջերմության աստիճանը բարձրանալով գոլորշիացում և առաջացնում, վորի ճնշումը հետզհետե բարձրանում ե, իսկ յերբ գոլորշու առաջականությունը հասնում ե պահանջված մթնոլորտի ճնշման, հնոցավարը կամ պակասացնում ե ալլումը, կամ բոլորվին դադարեցնում ե հնոցի աշխատանքը, մինչև վոր պատրաստված գոլորշու մի մասը ծախսվում ե իսկ նրա տեղը կաթսայում լցնում են ջուր:

Վերելում նկարագրված դոլորշիացման աշխատանքի ամբողջ ընթացքում ը գոլորշիատար խողովակը փակ եք:

Յերբ անհրաժեշտ ճնշում ունեցող շոգին պատրաստ և լինողովակի փակը կամ հնոցավարը բաց ե անում գոլորշիատար խողովակի փակը (կափարիչը կամ սողնակը) ու շոգին շոգիացմար կամ շոգեմեքենան աշխատանք կատարելու, կամ այլ (որինակ շոգիյով շնչքի տաքացում) կարիքների համար:

Շոգեկաթսաներում դոյցություն ունեն ամենահրաժեշտ ջրի քանակի սահման և ջրի քանակի սահմանից, մինիմումից պակաս լինելը կարող ե չափազանց մեծ վնասներ հասցնել, մինչև իսկ կաթսան պայմենացնել:

Կաթսայում յեղած ջրի քանակը, բարձրությունը ցույց տալու համար կան ջրացույց ապակիներ, վորոնք կառուցված են հաղորդիչ անոթների որենքի հիման վրա:

Տ Ա. Ք Ա. Ց Մ Ա. Մ Ա. Կ Ե Բ Ե Ս

Կաթսայի այն մակերեսը վորի մի կողմից վողողում են ծխատար խողովակով անցնող տաք զագերը իսկ մյուս կողմից կաթսայի միջի ջուրը, կոչվում ե տաքացման մակարդակը, վոր ընդունված ե հաշվել քառակուսի մետրներով: Այսպես, յեթէ, յերկու նման և միենուն մեծության կաթսաներ լինեն տարրելու

առաքացման մակերեսով, անշուշտ այն կաթսան ավելի լավ կաշիատի, աչսինքն յուրաքանչուր մեկ ժամում ավելի գոլորշի կարտադրի, վորի տաքացման մակարդակն ավելի մեծ լինի: Պարզենք որինակով:

Կան յերկու զլանաձև կաթսաներ, վորոնցից մեկը հնոցի վրա կանգնած և ուղաճայց կերպով, իսկ մյուսը պառկեցրած և հորիզոնական կերպով:

Առաջին կաթսայի միմիայն զլուխն և կրակի վրա, իսկ մյուսը յերկարությամբ և 50 սմ. խորությամբ կրակի և տաք զագերի ճետ կապ ունի:

Կաթսաների տրամագիծը 100 սմ. և, իսկ յերկարությունը 200 սմ. ե:

1) Կաթսայի գլխի մակարդակը ընդունենք մոտ 1 քառակուսի մետր: 2) Իսկ, յերկարությամբ պառկած կաթսայինը մոտ 3 քառ. մ. յեթէ ուղագրությամբ հետևենք ջրի տաքացման գործողությանը կնկատենք յերկու կարեսը հանգամանք:

ա) Առաջին կաթսայի ջուրը յուրաքանչուր մեկ միավոր ժամանակմիջոցում (որ, մեկ վարկանում) ջերմություն ստանում և մեկ քառ. մետր տարածությունից իսկ յերկրորդ կաթսայի նույն քանակության ջուրը նույն ժամանակմիջոցում ջերմություն ստանում և յերեք քառ. մետր մակարդակից, ուստի և ջուրն ավելի ջուս կտաքանառ և արագ գոլորշիացում կունենա:

բ) Առաջին կաթսայի հնոցում այբովով վառելանցությունից տաք զաղերն անմիջապես դուրս են գնում իրենց հետ տանելով մեծ քանակությամբ ջերմություն, իսկ յերկրորդ կաթսայի հնոցում այբովով վառելանցությունից առաջացած տաք գաղերը մինչև մթնուրդ գնահն անցնում են ծխատար խողովակով, մանապարհին շփվում են կաթսայի մյուս մասին, վորը այստեղ ել թողնելով ջերմության մեջ մասը, գուրս են գնում ավելի պակաս ջերմություն տանելով իրենց հետ:

Այսպիսով տաքացման մակարդակը մեծացնելով ստանում ենք:

ա) յուրաքանչուր մեկ ժամում ավելի շուս (արագ) գոլորշիացում, բ) վառելանցութիւնից արտադրած ջերմության ավելի լրիվ ողտագործում:

Վերահիշալ բացատրությունից կարող ե սխալ յենթագրություն առաջանալ, իբր թե վորքան մնա (սահմանից դուրս) արևի տաքացման մակարդակն այնքան լավ կլինի:

Յուրաքանչյուր շոգեկաթսալի համար գոյություն ունի տառքացման մակարդակի առավելագույն չափը, վորից ավել անելն ոգուտի փոխարեն կարող ե վտաս հասցնել:

Որինակ՝ իթե մեր լերկորբդ կաթսան չափից դուրս լերկաք լիներ, այս գեպքում տաք գաղերը կաթսայի առաջին մասերում հնոցի մոտ իրենց ջերմությունը կտալին կաթսալին, իսկ կաթսայի վերջին մասում արդեն իրենք կաթսայից կիրեն ջերմություն, վորովհետև նրանց ջերմաստիճանը կաթսայի ջրի ջերմությանը համասարվեր կամ ավելի պակաս կլիներ:

Բացի այս անցնող վառելանյութի գաղերը սառելով դժվարությամբ դուրս կտան ծինելուզդից ու այդպիսով ալրում հնոցում կղանդաղացնեն:

Յեկ վերջապես յուրաքանչյուր մեքենա ընդունակ ե ծախսել ամեն մեկ ժամվա ընթացքում վորոշ քանակությամբ գոյութերից ավելին պատրաստելը վոչ մի միտք չունի, սրա պատճառով ել շոգեկաթսաների մեծությունը հաշվում հեն կապելով անձրաժեշտ արտադրանքի հետ:

Որինակ՝ լենթալինք հարկավոր ե վորոշել 100 ձիու ուժունեցող շոգեմեքենայի համար պատրաստվող շոգեկաթսայի չափսերը: Յեթե մենք գիտենք, վոր տվյալ շոգեմեքենան յուրաքանչյուր մեկ ձիան ուժ աշխատանք կատարելու համար մեկ ժամում ծախսում ե 10 կիլոգրամ գոյութիւն, իսկ տվյալ (մեր վերցրած) սիստեմի շոգեկաթսան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր տաքացման մակարդակից կարող ե յուրաքանչյուր ժամում արտադրել 20 կիլոգրամ գոյութիւն, կաըող ենք հեշտութիւնը հաշվել, թե վորքան տաքացման մակարդակ պետք ե ունենա տվյալ դեպքում շոգեկաթսան:

1) Վորքան գոյութիւն կծախսվի յուրաքանչյուր ժամում, յեթե մեկ ձիու ուժի համար ծախսվում ե 10 կիլոգրամ: $10 \times 100 = 1000$ կիլոգրամ մեկ ժամում:

2) Վորքան պետք ե լինի տվյալ շոգեկաթսայի տաքացման մակարդակը յուրաքանչյուր ժամում 1000 կիլոգրամ գոյութիւնը տաքացնելու համար, յեթե ամեն մի քառակուսի մետր տաքացման մակարդակը մեկ ժամում արտադրում ե 20 կիլոգրամ: $100:2 = 50$ քառակուսի մետր:

Ուրեմն մեր տվյալներով 100 ձիու ուժանոց շոգեմեքենայի շոգեկաթսան պետք ե ունենա ընդամենը 50 քառակուսի մետր տաքացման մակարդակ:

Իհարկե սա չի նշանակում, վոր մեր կաթսան իր 50 քառ. մետր տաքացման մակարդակով կարող ե արտադրել միայն $50 \times 20 = 1000$ կիլոգրամ գոյութիւն: Բոլորովին վոչ նույն այդ կաթսան կարող ե յուրաքանչյուր ժամում արտադրել 1200 կիլոգրամ կամ 800 կիլոգրամ, այսինքն հազարից ավել կամ պակաս: Ինչից ե կախված այդ բանը:

Կաթսայի շոգու արտադրողականությունը կախված ե կառուցվածքի սխառեմից և վառելացն յուրաքանչյուր ժամությամբ անունը քանակի վառելանյութի ալրումից յուրաքանչյուր քառակուսի գոյութիւնի յի արտադրում:

Բացի այդ միևնույն կաթսայի հնոցում յուրաքանչյուր մեկ ժամում այրված վառելանյութի շատ ու քիչ լինելու պատճեցությունն ե թողնում կաթսայի ջրի գոլորշիացման վրա:

Յեթե առաջին մեկ ժամում այրենք 10 կիլոգրամ քարածուին և ամեն մի քառակուսի մետր տաքացման մակերեսից ստանանք 60 կիլոգրամ գոյութիւն, իսկ յերկրորդ մեկ ժամում (նույն հնոցում) այրենք 16 կիլոգրամ քարածուի կստանանք մոտ 80 կիլոգրամ գոյութիւն:

Իսկ յեթե 3-րդ մեկ ժամում այրենք 5 կիլոգրամ քարածուի յուրաքանչյուր քառակուսի մետր մակարդակից ստաքապես կստանանք 40 կիլոգրամ գոյութիւն: Այս յերեք գեպքի մեջ կա արդյոք վորեն տարբերություն:

Անշուշտ նույնիսկ նման կոպիտ հաշվումներից մենք պարզ կտեսնենք, վոր ասացին ժամում մեկ կիլոգրամ քարածուիը տակիս և ամեն մի քառակուսի մետր տաքացման մակարդակից 60 կիլոգրամ: 10-6 կիլոգրամ գոյութիւն, իսկ յերկրորդ մեկ ժամում նույն մակարդակից յուրաքանչյուր կիլոգրամ քարածուիը տակիս և 40 կիլոգրամ: 5-8 կիլոգրամ գոյութիւն:

Գործնականում ինչ նշանակություն ունեն այս գեպքերը: Այն, վոր վերջին գեպքում գոյութիւնը թեև համեմատաբար դանդաղ ե կատարվում, բայց քարածուի ջերմածին ունակությունն ավելի լրիվ ե ոգտագործվում, իսկ յերկրորդ գեպքում ընդհակառակը գոյութիւնը կաթսայում կատարվում ե բավականին ինտենսիվ կերպով, բայց քարածուի արտադրած ջերմության մի մասը միանգամայն անոգուտ ե կորչում:

Այս հանդամանքները ևս լիովին հաշվի յեն առնվում կաթ-

սաների մեծությունը բնորոշելիս, ի հարկե նախորոք ոդտվելով այն տվյալներից, թե յուրաքանչյուր մեկ կիլոգրամ վառելանյութը նորմալ պայմաններում կաթսայի յուրաքանչյուր քառ. մետր տաքացման մակարդակից վորքան ջրի գոլորշիցում պիտի կատարի:

ՇՈԳԵԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (կառուցվածքը)

Շոգեկաթսաների չափազանց բաղմաղան սիստեմներ կան ու այս սիստեմներն ել տարբեր կառուցվածքներ ունեն, վորոնց նկարագրությունը պահանջում է հատուկ և մեծածավալ աշխատանք, իսկ այդպիսին այս նյութի նպատակը չե ուստի կրավարարենք նրա լերեք հիմնական տիպերին ծանոթանալով:

Դարդ գլանաձև շոգեկաթսայի աշխատանքի նկարագրությունը տված է այս բաժնի առաջին լերեսում, (առև նկ. № 1), Այս կաթսան սովորական կաթսաներից հիմնականում տարբերվում է նրանով, վոր ամբողջովին ծածկված է և պատ, բաստվող գոլորշին դրսի ողի (մթնոլորտի) հետ կապ չունի:


Գոլորշիացումը այստեղ կատարվում է հնոցում յեղած տաքությունն անմիջապես կաթսայի թերթերի միջով ջրին փոխանցելով:

Ներկայում պարզ գլանաձև շոգեկաթսաներ չեն պատրաստում, վարովիետև սրանց գոլորշիացումը համեմատաբար շատ պակաս է, տեղ շատ են զրավում ու տնտեսապես ձեռնառու չեն:

2. Մարտկոցային գլանաձև կաթսաներ.—Այս կաթսաներն իրենցից ներկայացնում են մի քանի զլանակ կաթսաների միացում:

Այս կաթսաները թվով չորս, վեց և իննը, միմյանց հետ միացած են լինում հատուկ միացնող խողովակներով, վորպես հաղորդակից անոթներ, ու վերի կաթսայում լցվող ջուրն անմիջապես անցնում և ցածում յեղած կաթսաների մեջ և վերևի կաթսայում ջուր կարող է լինել միայն այն դեպքում, յերբ ցածի կաթսաները ջրով լիքը լինեն:

Յածի կաթսաները տրամադերը վերևի կաթսայի արամագծից փոքր են: Նկ. № 2 ցուց է տված բատարեյական շոգեկաթսան չորս գլաններից բաղկացած յերկուսը վերևում, յերկուսը ներքեւի մասում ամրացրած, վորոնք միանում են խողովակներով:



Նկ. 2 Մարտկոցային շոգեկաթսա.
ա—տեսքը յեկարութամբ, բ—տեսքը ճակատից:

Յածի կաթսաները դիտավորեալ թեք են ամրացրած, վորպես զի լեռացող ջրի շրջանառությունը ավելի լավ կատարվի: Այս կաթսայի վարի գլանները ջրով լիքն են լինում, իսկ ամենավերի գլանների միայն 2—3 մասում ջուր է լինում, իսկ վերևի մասում գոլորշու տարածություն: Սրանց վրա հատուկ խողովակների միջոցով ամրացված ե մի փոքր գլանաձև անոթ, վորի մեջ կուսակվում ե չոր գոլորշին և վորը կոչվում է (սуխօպարհի) ալտանդից ել շողին գնում ե շոգեմեքենան աշխատացնելու:

Յերբ հնոցում չ—վառելանցութն այրում են, այնաեղ առաջացող տաք գազերը վորողում են տակի կաթսաները ու վերի կաթսայի ցածի մասը, ապա կաթսաների ամբողջ յերկարությամբ անցնելով, ծխնելուզով դուրս են գնում:


Տակի կաթսայի ճակատը, կրակի բոցի անմիջական քայլքամիչ ազգեցությունից ազատվելու համար, հնոցում կաթսայի ճակատի մասում շինված է կ—կիսապատը, վորի շնորհիվ կրակի բոցն անմիջապես չի շփվում կաթսայի ճակատի թերթերի հետ:

Բացի այդ, կաթսաների մարող յերկարությամբ շարքով մեկ վերեւից մեկ ներքեւից շինված են կ—կիսապատերը, վորոնց շնորհիվ հնոցում զարգացող տաք գազերը ոձապտում վեր ու վար անցքերով են անցնում (նկարում ցույց տված սլաքների ուղղությամբ) ու վորողում են թե ցածի և թե վրայի կաթսաներին:

Բատարեյական կաթսաների դրական կողմն այն է, վոր բավականին հասարակ կառուցվածք ունեն և համեմատաբար պարզ գլանաձև կաթսաների հետ սրանց մեջ գոլորշիացումն աշելի ուժեղ է կատարվում, իսկ բացասական կողմին պետք է վե-

բաղրել սբանց մեծածավալ լինելը և այն, վոր սբանք իրենց
մեծ ծավալի պատճառով բավականին տաքություն են կորցնում
ճառագայթման միջոցով: Ուստի և ձեռնտու յե այս կաթսաներն
աշխատեցնել միայն շատ եժանագին վտուելանյութով:

3. Զրախողովակավոր կաթսաներ.—Այս տիպի կաթս-
սաները լինում են բազմազան կառուցվածքների, վորոնց աշխա-
տանքի սկզբունքը շատ նման են միմյանց: Այս տիպի կաթսա-
ների հիմնական եյությունն այն ե, վոր մեկ գլանաձև շղղեկաթ-
սալի տակի մոսում միացած են մի շարք խողովակներ, (տես
նկ. № 3) մեկ կամ էրկու տուփաձեկ և խողովակների միջոցով,
վորոնք կոչվում են ջրի կամերաներ:



Նկ. 3 Զրախողովակավոր շղղեկաթսա:

Ինչպես մարտկոցալին կաթսաներում նույնպես և ալսուեք
ջրի խողովակները և կաթսան կազմում են հաղորդակից անոթ-
ներ և կաթսայում լցվող ջուրն անմիջապես անցնում են խողովակ-
ների մեջ ու կաթսայում ջուր լինում են միայն այն դեպքում,

իերբ բոլոր խողովակները ջրով լի յեն: Զրախողովակներն իբենց
կամերաներով ամրողովին գտնվում են հնոցի մեջ:

Վորովինետ այդ խողովակները անհամեմատ ավելի բարակ
են քան թե կաթսաների գլանները, սրանց միջի ջուրը արագ ե
լնում, ու շրջանառություն ե կատարում առաջին մասից բարձ-
րանում լցվում կաթսան, իսկ կաթսալի յետին մասից համեմա-
տարար պակաս տաքություն ունեցող ջուրը իջնում լցնում ե
յետին կամերան և—այնտեղից ել ջրատաքացման կամ ավելի
ճիշտ, ջրայնուացման խողովակների մեջ:

Այստեղ ջուրն արագ կերպով յեռալով բարձրանում լցվում
ե կաթսայի առաջին մասը, իսկ յետին մասից նորից խողովակ-
ներն ու այսպես անվերջ ջուրն արագ շրջանառություն ե կատա-
րում հնոցում տեղալորդված ջրայեռացման խողովակների մեջ ու
կաթսայում բավականին ինտենսիվ գոլորշիացում ե կատարվում:

Զրատաքացման խողովակային կաթսաների դրական կողմն
այն ե, վոր համեմատարար սրանց ջրային տարածությունը—
ծավալը փոքր ե և արագ գոլորշիացում ե կատարում և ջերմու-
թյան կորուսաը համեմատարար քիչ ե լինում:

Այս կաթսաների բացասական կողմն այն ե, վոր մեծ քա-
նակությամբ գոլորշի ծախսելու դեպքում ջուրն արագ կերպով
պակասում ե և կաթսալի ճնշումը բարձրանում: Ջրի արագ պա-
կասելու, այսինքն գոլորշիանալու պատճառը պարզվում ե գրքի
առաջին մասում, հագեցած գոլորշու հատկությունների մասին
յեղած տեղեկություններից, վորտեղ ասված ե, վոր ջուրը հա-
մապատասխան ճնշման տակ կարող ե ունենալ $100\text{--}150$ մինչև
 300° ջերմություն, և հենց վոր սրա վրա յեղած ճնշումը պակա-
սեցնենք, այսինքն յեղած գոլորշին ծախսենք, անմիջապես մնա-
ցած ջուրը կը գոլորշիանա, մինչև յեղած ջերմության աստի-
ճանի համապատասխանող ճնշումը կաթսայում վերականգնվի:

Վերոհիշյալ պակասությունը կվերանա, յեթե նման տիպի
կաթսաները ոգտագործվեն խոզոր ձեռնարկներում (....), վորտեղ
գոլորշու վատնումը կատարվում ե համաշափ կերպով:


Այս կաթսաները լինում են հորիզոնական և ուղղահայց
դրությամբ, մի քանի տասնյակ յեռացման խողովակներով:

Շոգեկաթսաներ, իրաւար յեվ ծխասպառ խողովակներով

Այս ախտի կաթսաների թվին են պատկանում նաև շղղե-
քարշերի շղղեկաթսաները, վորոնց նկարագրությամբ և կզբաղ-
վենք:

Մինչև հիմա նկարագրած շողեկաթսաները, բոլորն ել հարձարեցված են ազյուտից պատրաստված հնոցների վրա և թե առաջի մասում ծուխը հավաքելու կամերան, ծխատուվը պատրաստված են նույնպես ազյուտներից վորպես հնոցի անմիջական մաս, իսկ շողեկաթսան սրանց վրա իր յերկարությամբ հարձարեցված են:

Բոլորովին այլ կառուցվածք ունեն հրածխատար խողովակներով լոկոմոտիվային շողեկաթսաները, վորոնց թվին են պատկանում նաև շողեքարշերի շողեկաթսաները,



Նկ. 4. Շողեքարշի կաթսան (հրատար և ծխատված խողովակներով):

Շողեքարշի շողեկաթսան իրենից ներկայացնում է ծուլածոյերկաթից պատրաստված մի կահավորում, վորի թե կաթսան, թե հնոցը և թե ծխատուվը իրենց կառուցվածքով մի ամրող ջութիւն են կազմում (տես նկ. № 4)։

Շողեքարշի շողեկաթսան բաղկացած է յերեք գլխավոր մասերից, ա) հնոց, բ) գլանաձև մաս հրատար և ծխատված խողովակներով ու շողեկմբեթով, գ) ծխատուվի ծխնելուզով ու իր միջի մի շարք հարմարություններով։

Այս կաթսայի աշխատանքը կատարվում է հետեւյալ կերպ։ Յերբ հնոցում այրում են վառելանուութը, սրա քիմիական եներգիան փոխանցվում է առաջացած գազերի շերմության հերդիային։

Հնոցն իր հերթին բաղկացած է կրակատուփից և վրայի ծածկից (կոժուխից) վորոնք միմիանց հետ միացած են բաղմաթիվ կապերով և կաթսայի գլանաձև մասի շարունակությունն և կազմում։

Կրակատուփի առաջի պատը, վոր մեծ մասամբ լինում է կարմիր պղնձից պատրաստած, իր վրա ունենում է, մեծ քանա-

կությամբ մեծ և փոքր անցքեր։ Ծխատուփի յետին պատի վրա (ծխատուփը առաջի պատ չունի, նրան փոխարինում ե գոնակը), նույն քանակությամբ և նույն մեծությամբ անցքեր կան Այս անցքերի մեջ հաջոցված են լինում համապատասխան տրամադրով՝ մեծ և փոքր խողովակներ։ Մեծ խողովակները կոչվում են հրատար, իսկ փոքր միասնական խողովակները՝ Զարժվող շողեկաթսաների հրատար խողովակները, բացի նրանից, վոր իրենց միջով հնոցի տաք դաշերն անց են կացնում, տանում ծխատուփի, վորտեղից ալումինից իրենց ջերմության խողոր տոկոսը կաթսայի ջրին, տալուց հետո ծխնելուզով դուրս են գնում դեպի մթնոլորտ, կատարում են նաև գերատաքայնող ապարատի դեր, և կոչվում են գերատաքայման խողովակներ։

Գերատաքայութիւնների բազմատեսակ սիստեմներ կան, վորոնցից ամենատարածվածը Շմիդտի և Չուսովի հրատար խողովակային գերատաքայնողներն են, վոր աշխատում են հետեւյալ կերպ։

Շողեկմբեթի ուղղորդի խողովակով գոլորշին գալիս լցվում է ծխատուփի վերին մասում ամրացված մի տուփի (կոլլեկտորի) մեջ։

Այս տուփը բաժանված է յերկու մասի ա) հագեցած գոլորշու բաժին, բ) գերատաք շողու բաժին։ Հագեցած գոլորշու բաժին մի ծայրով միացած են մի շարք բարակ խողովակներ (ելեմենտներ) վարոնք յետ ու առաջ 4-6 պտույտ են կատարում հըստատար կամ ինչպես կոչվում են գերատաքայնող խողովակի մեջ, աղա մյուս ծայրով ամրացված են կոլլեկտորի յերկորդ գերատաք գոլորշու բաժնին։ Առաջին բաժնից հագեցած գոլորշին մտնում է եկմենտների մի ծայրից, սրանց մեջ շրջանառություն ե կատարում։

Վորովհետեւ ելեմենտները տեղափորված են հրատար խողովակների մեջ, իսկ վերջիններիս միջով հնոցի տաք գազերն անցնում, գնում են դեպի ծխատուփի, սրանք վողովում են ելեմենտները, տաքացնում են, վորից տաքանում ե նաև ելեմենտների միջի ջրից անջատած հագեցած գոլորշին։ Հագեցած շողին այսպիս շատ տաքանալով սրա յերմության աստիճանը բարձրանում

ե և նա դառնում ե շոգի ու այդ գրությամբ գնում լցվում ե ծըստուփում յեղած կողեկտորի յերկորդ բաժինը, իսկ այստեղից ել գեպի շոգեմեքենա՝ աշխատանք կատարելու:

Ծխասպառ խողովակները ծառայում են միայն տաք գազերն իրենց միջոցով ծխատուփ ուղարկելու համար, և իրենք ել տաքանալով, գաղերի տաքությունը փոխանցում են կաթսայի մեջ յեղած ջրին:

Բացի այս, կաթսայի ջուրը բավականին խոշոր քանակությամբ ջերմություն ստանում ե հնոցի կրակատուփից, վորի թռ պատերը, թե առաստաղը վողողված են լինում կաթսայում յեղած ջրով (տես նկ. № 4):

Վորովինետն շոգեշարժերի շողեկաթսաների հնոցների համար մի շաբթ անհարմարությունների պատճառով յերկար ծխնելուցներ չեն կարող լինել, հնոցում ուժեղ արյունն ապահովելու համար այս կաթսաների ծխատուփերի մեջ հարմարեցնում են կարճ կոնաձև խողովակ, իսկ սրա տակից ամրացնում են շոգեմեքենայից աշխատած գոլորշին դուրս տանող խողովակները:

Աշխատած գոլորշին անցնելով այս կոնի միջով ուժեղ կերպով ծխնելուցով դուրս և գնում և իր հետ դուրս տանելով ծըխատուփում հավաքված տաք գաղեր ծխատուփում առաջացնում նոսրացնում ե, վորի շնորհիվ հնոցի տաք գաղերը դրսի 1 մթն. ձնշում ունեցող որդի ձնշման տակ արագ կերպով դուրս են գնում ծխասպառ և հրատար խողովակներով, Այսպիսով հնոցում այրում ուժեղանում ե:

Ի միջիալոց չպետք ե մոռանած վոր գերատառքացնող խողովակներ բոլոր շոգեքարշերը չունեն, վորովինետն հին շոգեքարշի մեծ մասը աշխատում ե հագեցած գոլորշով, իսկ ծխասպառ խողովակներ ունեն բոլոր շոգեքարշերի կաթսաները:

Այստեղից պարզվում է, վոր շոգեքարշի շոգեկաթսայի տաքացման մակերեսը գումարվում ե, ծխասպառ և հրատար խողովակների մակարդակներին, ինչպես նաև կրակատուփի պատերի մակարդակին:

Ինչպես բոլոր շոգեկաթսաները, նույնպես և շոգեքարշի շոգեկաթսաներն ապահովելու և հսկելու համար ունեն մի շաբթ հարմարություններ, ինչպիսիք են՝ ջուր մղելու—ինժեկտորներ, ձնշումը ցույց տալու համար մանոմետրներ, ապահովիչ կափարիչներ, ջրացուց ապակի, ֆարսունկաներ և այլն. Այս հարմարթյուններն ու մեխանիզմները կոչվում են կաթսայի արմատու-

ռան, վորի մանրամասն նկարագրությունը մեր նյութի մեջ չի մտնում:

Շոգեքարշի շոգեկաթսայի գրական կողմերն են՝ բավական խոշոր տաքացման մակերես ունենալը, ամբողջ կահավորման վոչ շատ մեծ լինելը, վոչ շատ ծանր լինելու հետ միասին, և հնացի լով ապահովումը աշխատած գոլորշին կոնուսի միջով դրւութունը հետևանքով:


Սրա պակասությունն այն ե, վոր համեմատաբար այս կաթսան մաքրելն ավելի գժվար ե (մեծ քանակով, ծխասպառ խողովակների պատճառով) և նորոգման կարիք ավելի շուտ շուտ և զգում: Այսումնայնիվ շոգեկաթսաների վերը նկարագրված կառուցվածքը իր պակասությունների հետ միասին բավականին շավ ե շոգեշարժի համար ու գեռ ուղիղ տիպի կաթսաներ սրան, չեն կարողանում դուրս վանել յերկաթուղու տրանսպորտից:

ՆՈԳԵՄԵՔԵՆԱՆ

Ընդհանուր տեղեկություններ.—Շոգու ուժով աշխատաղ մեքենաները ոգտագործվում են, թե վրապես տեղում աշխատող (ստացիոնար) շարժիչներ, վորոնց եներգիան թափանիվների միջոցով փոխադրում են բազմատեսակ ստանուկներ, նաև այլ մեքենաներ աշխատացնելու համար և համապատասխան հարմարություններով շինված շարժվող կառքերի, շոգեքարշերի վրա, վորոնց եներգիա փոխանցվում և շոգեքարշի տանող անիմներին սպառեցնելու համար: Վորապես հիմնական նյութ կծանոթանանք շոգեքարշերի կտուցվածքի ու աշխատանքի հետ, վորի ամենահիմնական տարրերությունը կայանում է նրանում, վոր միոցի հետադարձ հորիզոնական շարժումը, ինչպես վերն առացինք, փոխվում և ոռզեարշի անիմի օրշանային շարժման, ինկ վերջինս սփելով ուղևորի հետ առաջ և շարժվում իր հետ բաշելով ամբողջ գնացք:

Այս իսկ տեսակետից մենք ավելի մանրամասնորեն կծանոթանանք սողնակալին շոգեմեքենաների հետ, վորոնք բացի բացառիկ դեպքերից, գերիշխում են շոգեքարշերի վրա:

Այս աշխատանքը կատարելու համար, բոլոր շոգեմեքենաներն ունեն հետևյալ հիմնական մասերը (տես նկ. № 5):



Նկ. 5. Աշխատանքը կատարելու համար շոգեմեքենաների վերջույթի առաջնային մասերը

ա) գոլորշիաբեր խողովակ իր փականով, վորը ծառալում է մեքենավարի ցանկությամբ շոգեկաթսալից (սոխորնիկ-ից) գոլորշին դեպի շոգեմեքենան բերելու համար:

բ) Շոգեբաշխիչ տուփ, վորանդ հավաքվում է շոգեկաթսալից յեկած գոլորշին ու անհրաժեշտ կերպով բաշխվում է վկանում, միոցի առաջին ու յետին մասը: գ) Սողնակ, վորը բաշխում է գոլորշին միոցի այս կամ այն կողմը համապատասխան քանակով լորշին միոցի այս կամ այն կողմը համապատասխան քանակով: դ) Շոգեպլան, վորտեղ գալիս է շոգեկաթսայում ստացված գոլորշին, վորտեղ գալիս է կատարում: է) Գոլորշիաբեր խոլորշին ու իր աշխատանքը և կատարում: լ) Գոլորշիաբեր գոլորշակ, վորտեղից գլանում իր աշխատանքը կատարած գոլորշակը վորանդ աշխատանքը մթնոլորտ: մ) Միոց (պօրշեն), վորին գուրս և գնում դեպի մթնոլորտ: ն) Միոց (պօրշեն), վորի վրա անմիջականորեն ազդում է գոլորշին իր աշխատանքը վորի վրա անմիջականորեն ազդում է գոլորշին իր աշխատանքը միոցի շարժաթիվի (կուվոշիպի) միջոցով միոցից ստացված հորիզոնական շարժումը փոխում է թափանիվի (իսկ շոգեքարշում տանող անիմիվի) պտույտալին շարժման: (Սահնակ, վորի միջոցով միոցի շտոկը (պոչը) միանում է շատունի հետ շարժական (շարժության) կերպով: թ) Տահնոց անիմների առանցք իրեն վրայի սիրային) կերպով: թ) Տահնոց անիմների առանցք իրեն միացած է շատունի մյուս ծայրը: ժ) Արշուռափիկով, վորի հետ միացած է շատունի մյուս ծայրը: ի) Հիմք, (շոգեքարշում ցով սողնակը ստանում է իր շարժումը: ի) Հիմք, (շոգեքարշում նրա շրջանակը), վորի վրա ամրացած էն շոգեմեքենաները:

ԻՆՉՊԵՍ Ե ԱՇԽԱՏՈՒՄ ՇՈԳԵՄԵՇՔԵՆԱՆ

Կաթսալի սուխոպարնիկից գոլորշիաբեր խողովակը գնում է պուփ և գեղարքություն մեքենավարը ցանկանում է մեքենավար սողնակի տուփը: Յերբ մեքենավարը ցանկանում է մեքենան աշխատեցնել, գոլորշիաբեր խողովակի գլխին կամ մեքենային մոտիկ յեղած համապատասխան փականը բացում է և կաթսալի մոտիկ յեղած արագ կերպով խուժում է սողնակի տուփը:

Սողնակի տուփի մեջ կան յերկու անցքեր, վորոնք սողնակի տուփը միացնում են շոգեգլանի հետ, և կոչվում են ոռզեմուտի պատուհաններ: Այս անցքերից գոլորշին մտնում է շոգեգլան և այնտեղ յեղած միոցը հրում է առաջ կամ յետ նաև գրան, թե միոցի վոր կրղմն է մտել գոլորշին:

Յերբ միոցը հասնում է իր քայլքի վերջին կետին, այս աննպամ սողնակը բաց և առնում հակառակ շոգեմուտքի պատ-

առուհանը, իսկ նախկին պատուհանը փակած և լինում: Սրա հետևանքով գործին մտնում ե շոգեպլան մխոցի հակառակ կողմը և հրում ե յետ մինչև հետին ծայրահեղ դրությունը: Այս գործողությունը կրկնվում է շոգեմեքենայի աշխատանքի ամբողջ ընթացքում և գործին մտնելով գլան՝ մեկ մխոցի առաջին, մեկ յետին կողմը՝ նրան ստիպում ե յետ ու առաջ շարժել:

Մխոցի վրա տմուր կերպով ամբացված ե մի ձող (պոչ) վարը մխոցակոթ և կոչվում: մխոցի յետ ու առաջ շարժվելու համար մխոցակոթը նույն շարժումն է կատարում, այսինքն յետ ու առաջ և շարժվում: Մխոցակոթի մլուս ծայրը, վոր շոգեպլանից դուրս ե գտնվում, միացած և կրկեցկոպֆի հետ, վորը սողում և յերկու զուգահեռների մեջ, կամ մեկ զուգահեռի վրա նայած նրա կառուցվածքին: Միաժամանակ այս կրկեցկոպֆին շարնիրային (շարժական) կերպով միացած ե մի լծակ, վորը շարժաթիւ (շատուն) և կոչվում:

Շարժաթիւն (շատուն) ել միացած և ծնկածել լիսեռնի (վարքարչի ծունկի հետ վորը շուռութիվիկ (կոփոշիպ) և կոչվում, իսկ շոգենողը տանող անիվների վրա լեղած շուռութիվիկ հետ (տես նկ. № 5):

Շարժաթիւ մեղեխի հետ միասին կոչվում է (շուռութիվիկ շատունային) մեղեխ-շարժաթիւ մեխանիզմ, վորը մխոցի հորիզոնական հետադարձ շարժումը փոխանցում և շոգեքարչի անող

Ծոգին, ըստ հարկին բաշխվում ե, մխոցի առաջին կամ յետին մասը պղնձայ տուփի սողնակի միջոցով, վորն իր շարժումը ստանում և պատվազ լիսեռնից (վալից), մի ձգանի միջոցով, վորն ը միասին կոչվում են շոգեբաշխիչ մեխանիզմ:

ՅՈԳԵՄԵՔԵՆԱՍՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոգեմեքենաները կարելի լի բաժանել հետելյալ տեսակների ա. ըստ կառուցվածքի շոգեմեքենաները լինում են:

1. Կրկնակի գործողության շոգեմեքենաները, վորոնց դլան-ներում շոգին աշխատում ե, թե մխոցի առաջին, թե յետին կող-

2. Հասարակ գործողության շոգեմեքենաները, վորոնց դլան-ներում շոգին միայն մեկ կողմն է լցվում ու համապատաս-ինարքենքին մեկ կողմի վրա յի սեղմվում:

Բայտ դլանների դասավորության:—1. Աւղանա-ցաց շոգեմեքենաները, 2. Հորիզոնական շոգեմեքենաները:

Աւղանայաց շոգեմեքենաները մինուուն մեծության դեպ-քում տարածություն ավելի քիչ և զրավում քան թե հորիզոնա-գան շոգեմեքենաները, բայց վերջիններս ունեն այն առավելությունը, վոր սրանց ըլուր մասերը ցածով են տեղափորված ու աշ-ները, վոր սրանց ըլուր մասերը ավելի հարմար ե: Մրանց բացասական կողմն խատանքին հակն ավելի հարմար ե: Մրանց բացասական կողմն խատանքին հակն ավելի հարմար ե: Վոր սրանց ըլուր մասերը ավելի շուտ են մաշվում, քան թե ուղ-ել այն ե, վոր պահաները ավելի շուտ են մաշվում, վոր սրանց ըլուր մեքենաների գլանները, վորովհետեւ առաջինների մխոց-գանայաց մեքենաների գլանները, վորովհետեւ իրենց ծանրությամբ ները հորիզոնական շարժման ժամանակ իրենց ծանրությամբ ամբողջովին ընկնում են գլանի ցածի մասի վրա:

Բայտ գլանների թվի:—1. Մեկ շոգեգլան ունեցող մեքե-նաներ, վորոնք ոգտագործվում են վորը աշխատանք կատարե-նամար, վորաել սրա դիմաց պահանջվում է եժանագին ու հասարակ կառուցվածք:

2. Բաղմագլան շոգեմեքենաները, վորոնք ունեն իերկու-ցե-ցեք կամ չորս շոգեգլաններ:

1. Լոս գլուրօն աժխատանիք:— Լոփի ճնշման շոգեմե-քենաները, կոչվում են այն մեքենաները, վորոնց գլանում կաթուալից յեկած թարմ շոգին մխոցի քայլքի մինչև վեր-կա կանընդատ մտնում և գլան ու մխոցի աշխատանքը կա տարում և ամբողջովին թարմ շոգիով:

2. Լայնացման (ընդարձակման) շոգեմեքենաները, կոչվում են այն մեքենաները, վորոնց գլանում թարմ գործին լցվում ե այն միայն վորոն (0,3—0,4) մասը, վորից հետո սող-մխոցի քայլքի միայն վորոն (0,3—0,4) մասը, վորից հետո պահանակը վակում և շոգեմուտքի պատուհանները և շոգին դադա-նակը վակում և զլան մտնելուց, իսկ մխոցը իր քայլքը շարունակում է ըլուր մասը մտնելուց շոգին այսպիսի շոգեմե-գլանում յեկած շոգու ընդարձակման շոգինիվ: Այսպիսի շոգեմե-գլանում յեկած շոգու ընդարձակման ունակությունը, եներգիան քենաներում շոգու ընդարձակման ունակությունը, եներգիան պա-փելի լոփի և ոգտագործվում, ուստի գործը յետեւ հետեւար և վա-պելանութիւ տնտեսում և լինում:

Լինում ե նաև կրկնակի ու յետեւար ընդարձակման (լայնաց-ման) շոգեմեքենաները, վորոնց մեջ շոգին առաջին գլանում ըն-դարձակմելով, իր աշխատանքը կատարելուց հետո, հատուկ խո-դարձակմելով, իր աշխատանքը մեծ գլանը—այստեղ ել, աշխատանքը դափակով և լցվում մշտուր մեծ գլանը—այստեղ ել, ավելի մեծ ընդարձակմելով կատարելուց հետո լցվում և յերբորդ, ավելի մեծ

